**«Մալխասյանց 12» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Երևան քաղաքի Մալխասյան 6/3 և 8 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցման ՇՄԱԳ հաշվետվության հանրային 2-րդ լսման վերաբերյալ**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**05.12.2025թ.** **ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան**

2025թ. դեկտեմբերի 5-ին ժամը 11:00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ «Օրենք», ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածով սահմանված կարգով, Երևան քաղաքի, Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում՝ տեղի ունեցավ «Մալխասյանց 12» ՍՊԸ կողմից նախատեսվող Երևան քաղաքի Մալխասյան 6/3 և 8 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

Ներկա էին հանրային քննարկման կազմակերպող՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Գոհար Մինասյանը, Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Սուրեն Վարոսյանը, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Էլլադա Արամյանը, «Մայր Հայաստան» խմբակցության ավագանու անդամ Արմեն Քոչարյանը, նախագծի գլխավոր ճարտարապետ Աիարոն Չոլախյանը, «Մալխասյանց 12» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Տիգրան Թումանյանը, «Քոնսեկոարդ» ՍՊԸ ներկայացուցիչ Արման Խաչատրյանը և շահագրգիռ հանրությունը (Մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով և լուսանկարները կցվում են արձանագրությանը):

**Ելույթ ունեցան՝**

Հանրային քննարկումը սկսեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Գոհար Մինասյանը: Նա ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային լսման իրականացման կարգը՝ համաձայն կառավարության որոշման: Նշեց, որ հանրային լսման է ներկայացվել ՇՄԱԳ հաշվետվության լրամշակված տարբերակը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները և մի շարք գերատեսչություններ, որոնց կարծիքների հիման վրա ՇՄԱԳ հաշվետվությունը լրամշակվել է:

Նախատեսվող գործունեության նախագծային լուծումները ներկայացրեց «Քոնսեկոարդ» ՍՊԸ ներկայացուցիչ Արման Խաչատրյանը, ապա խոսքը փոխանցվեց, գլխավոր ճարտարապետ Աիարոն Չոլախյանին, ով մանրամասնեց նախագիծը:

Հնչեց հարց համայնքի ղեկավար Սուրեն Վարոսյանից, թե արդյոք նախատեսվել է մայթ, ինչին ճարտարապետ Աիարոն Չոլախյանը պատասխանեց, որ մայթը արդեն իսկ կառուցվել է, ինչպես նաև նախատեսվել է կանաչապատում: Էլլադա Արամյանը հարցրեց թե արդյոք հնարավոր չէ նախատեսել ուղղաձիք կանաչապատում, ինչին Աիարոն Չոլախյանը պատասխանեց որ նշված առաջարկությունը արդեն իսկ նախատեսված է ավտոհանգրվանային մասնաշենքի մասում և ներկայացրեց գծագրական նյութերը:

Հնչեց հարց Արմեն Քոչարյանի կողմից այն մասին, որ առաջին հանրային լսման ժամանակ առաջարկվել է հաշվի առնել և նախագծային լուծումներում ներառել ապաստարան, ինչին ճարտարապետ Աիարոն Չոլախյանը պատասխանեց, որ ապաստարանը նախատեսված է ավտոհանգրվանային մասնաշենքում: Արմեն Քոչարյանը հակադարձեց, որ ապաստարանը նախատեսված չէ բնակելի շենքում, ինչին Աիարոն Չոլախյանը պատասխանեց, որ ապաստարանը նախագծված է ՀՀ-ում գործող օրենքներին և տեխնիկական պահանջներին համապատասխան և տվյալ նախագծային լուծումների համապաասխանությունը կարգավորվում է ՀՀ ԱԻՆ կողմից: Նա հավելեց, որ եթե հետագայում ԱԻՆ-ի կողմից կլինեն այլ ցուցումներ, դրանք կիրականցվեն ըստ պահանջի:

Գոհար Մինասյանի կողմից հնչեց հարց տարածքի առկա վիճակի, գոյություն ունեցող շինություններով ծանրաբեռնված լինելու վերաբերյալ, ինչին ընկերության ներկայացուցիչը պատասխանեց որ տարածքում առկա է նախկին HSBC բանկի շենքը, որը քանդման ենթակա է, իսկ առկա ենթակայանի շենքը (որտեղ գտնվում է նաև կաթսայատունը), չի քանդվելու այլ օգտագործվելու է նախատեսվող Ծրագրի շրջանակներում: Ճարտարապետ Աիարոն Չոլախյանը հավելեց, որ քանդվող շենք-շինությունների և հողային աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասն ներկայացված է ՇՄԱԳ հաշվետվությունում և հաշվետվությանը կից՝ նախագծային փաստաթղթերում:

Գոհար Միանսյանը եզրափակեց հանրային լսումը, նշելով, որ հանրային լսումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հանրային լսման արձանագրությունը և տեսաձայնագրությունը կներկայացվի նախաձեռնող կողմին:

Վարող՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի մասնագետ Գոհար Մինասյան

______________________

Նախաձեռնողի ներկայացուցիչ՝
Տիգրան Թումանյան

______________________